ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 5(85), 29 ՀՈՒՆԻՍ, 2026թ.

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԹԻՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՆԳՆ ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ս.թ. հունիսի 22-25-ը ՀՀ ՆԳՆ Կրթահամալիրում ՆԳՆ օպերատիվ կառավարման կենտրոնի աշխատակիցների համար անցկացվում են թիմային աշխատանքի և հաղորդակցության հմտությունների զարգացման դասընթացներ:

Դասընթացներն իրականացվում են Կրթահամալիրի կողմից հայտարարված «Թիմային աշխատանքի և հաղորդակցական հմտությունների զարգացման խորհրդատվական ծառայությունների» գնանշման մրցույթի արդյունքների հիման վրա: Դասընթացավարն է մրցույթում հաղթող ճանաչված «Whitebone Experience Management» ընկերության հիմնադիր-տնօրեն Շուշանիկ Ղալթախչյանը, ով ավելի քան 20 տարվա մասնագիտական փորձ ունի մարդկային հոգեբանության, թիմային մշակույթի ձևավորման և զարգացման, ինչպես նաև վարքային վերլուծության ոլորտներում:

Դասընթացներն ընթանում են 8 խմբով (յուրաքանչյուրում՝ 18-19 մասնակից) և նպատակ ունեն բարելավել քաղաքացիակենտրոն սպասարկման հմտությունները:

Դասընթացի ավարտին մասնակիցները պետք է կարողանան.

- արդյունավետ վարել հեռախոսային հաղորդակցությունը քաղաքացիների հետ,
- արագ բացահայտել զանգահարողի հիմնական կարիքները,
- կառավարել կոնֆլիկտային և ագրեսիվ իրավիճակները,
- աշխատանքային միջավայրում կիրառել սթրեսի կառավարման գործիքներ:

Վերոհիշյալ արդյունքների արձանագրմանն է միտված մասնավորապես այնպիսի հմտությունների զարգացումն ու բարելավումը, ինչպիսիք են հեռախոսազանգերի ժամանակ հստակ ու կառուցվածքային հաղորդակցությունը և այդ ընթացքում վստահություն ներշնչող խոսքի կիրառումը, կարևոր տեղեկատվության արագ հավաքագրումը, ինչպես նաև ագրեսիվ կամ հուզական վիճակում գտնվող քաղաքացիների հետ հաղորդակցումը, ինչը թույլ կտա կոնֆլիկտների արդյունավետ կառավարման միջոցով նվազեցնել լարվածությունը:

Դասընթացի ծրագիրը ներառում է նաև օպերատորների համար սթրեսի կառավարման բաղադրիչը՝ միտված սթրեսային զանգերի հոգեբանական ազդեցությամբ պայմանավորված մասնագիտական հյուծվածության կանխարգելմանը՝ արագ վերականգնման տեխնիկաների յուրացմամբ:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԵՎ ՄԱԿ ՓԳՀ-Ի ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Շարունակվում է Կրթահամալիրի և ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ, UNHCR) գրասենյակի համագործակցությունը՝ ուղղված ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության աշխատակիցների վերապատրաստման գործընթացի նախապատրաստմանը, ինչպես նաև Կրթահամալիրի դասախոսական կազմի մասնագիտական ներուժի զարգացմանը:

Համագործակցության շրջանակում հունիսի 20-21-ը կազմակերպվել է հերթական մասնագիտական դասընթաց՝ նվիրված քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության և ապաքաղաքացիության կրճատման վերաբերյալ միջազգային կոնվենցիաներին:

Դասընթացի ընթացքում մասնակիցներին ներկայացվել են ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները, քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանությանն առնչվող հիմնական տեսական մոտեցումները, քննարկվել են գործնական դեպքեր և իրականացվել է իրավիճակային վերլուծություն:

Նմանատիպ վերապատրաստումները կարևոր նշանակություն ունեն ոչ միայն մասնագիտական գիտելիքների խորացման, այլև ոլորտում միասնական մոտեցումների ձևավորման և միջազգային չափանիշներին համապատասխան արդյունավետ գործելակերպերի ներդրման տեսանկյունից:

Կրթահամալիրի և ՄԱԿ ՓԳՀ-ի (UNHCR) գրասենյակի միջև ձևավորված շարունակական համագործակցությունը նպաստում է կայուն ինստիտուցիոնալ հիմքերի ամրապնդմանը և ոլորտի մասնագետների կարողությունների հետևողական զարգացմանը:

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է DCAF-Ի ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ

Հունիսի 8-12-ը Շվեյցարիայի Համադաշնության ժնև քաղաքում անցկացվել է Անվտանգության ոլորտի կառավարման ժնևյան կենտրոնի (DCAF, Geneva Centre for Security Sector Governance) կողմից կազմակերպված «Ուժային (անվտանգություն) ապահովող կառույցներում գենդերային հարցերով ուսուցում» (Teaching Gender in Security Institutions) թեմայով վերապատրաստողների վերապատրաստման միջազգային դասընթացը (TOT):

Դասընթացին մասնակցել են ներկայացուցիչներ Հայաստանից, Միացյալ Թագավորությունից, Շվեյցարիայից, Ֆինլանդիայից, Լեհաստանից, Բրազիլիայից, Արգենտինայից, Ուկրաինայից, Մոլդովայից, Տաջիկստանից, Եգիպտոսից, Թունիսից, Լիբիայից, Նիգերիայից, Հարավային Սուդանից, Պաղեստինից, ինչպես նաև միջազգային կազմակերպություններից:

Հայաստանը ներկայացնող երկու մասնակիցներից մեկը ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնի ավագ դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու Արտակ Գևորգյանն էր:

Դասընթացի շրջանակում քննարկվել են կանայք-խաղաղություն-անվտանգության օրակարգի նկատմամբ ժամանակակից մոտեցումները, այդ թվում՝ գենդերային կարգավորման հիմնական գաղափարները և տերմինաբանությունը, գենդերային վերլուծությունների էությունը, գենդերային հիմքով բռնության, կոնֆլիկտներին առնչվող սեքսուալ բռնության հաղթահարման մոտեցումները, գենդերային կառուցվածքների քարտեզագրման և դիմադրության հաղթահարման կառուցակարգերը:

Անդրադարձ է կատարվել նաև մեծահասակների ուսուցման և տրանսֆորմացիոն ուսուցման տեխնոլոգիաներին, մեթոդական առանձնահատկություններին, լսարանի հարմարեցումներին (ադապտացիային), նաև՝ տարբեր լսարաններում գենդերային հարցերի քննարկման առանձնահատկություններին:

Դասընթացի ավարտին մասնակիցներին հանձնվել են հավաստագրեր:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ

Մայիսի 29-ին տեղի է ունեցել ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական խորհրդի 2026 թվականի 6-րդ նիստը, որը վարել է Կրթահամալիրի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Մ. Մարկոսյանը:

Օրակարգային հարցերի քննարկման արդյունքում գիտական խորհուրդը որոշել է լրացումներ կատարել գիտական խորհրդի 2025 թվականի ապրիլի 1-ի թիվ 3 և թիվ 6 որոշումների մեջ՝ համաձայն որոնց՝

-Կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման ու փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանման պետերը, նրանց տեղակալները, դեպարտամենտների պետերը և վերապատրաստման կենտրոնների պետերն ատեստավորման հիմքով հավելավճար ստանալու ժամանակահատվածում ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակում պետք է ունենան առնվազն 100 ժամ ուսումնական բեռնվածություն, որում պետք է ներառված լինի առնվազն 32 ժամ դասախոսություն, սեմինար և գործնական պարապմունք,

-Կրթահամալիրում լրացուցիչ կրթական ծրագրով ուսուցման կարգում ամրագրվել է նոր՝ 14.1. կետ՝ հետևյալ բովանդակությամբ. «14.1. Թեստավորման միջոցով անցկացվող ստուգարքի դեպքում «ստուգված» ստանում է այն սովորողը, ով կեսից ավել թեստային առաջադրանքներին տվել է ճիշտ պատասխան»:

Գիտական խորհրդի մեկ այլ որոշմամբ հաստատվել է բակալավրիատի և մագիստրատուրայի սովորողների առավելագույնը 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի վերահանձնման կարգը, որով սահմանվել են առկա և հեռակա ուսուցման կրթաձևերի սովորողների՝ առավելագույնը 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի վերահանձնման կազմակերպման և անցկացման գործընթացները:

ՍԵՄԻՆԱՐ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ՍՏԵՓԱՆԱՎԱՆՈՒՄ՝ ԵՄ ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՇԱԲԱԹՎԱ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

«Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելք» նախաձեռնության ԵՄ Կայուն էներգիա-2026-ի շաբաթվա շրջանակում օրերս ՆԳՆ կրթահամալիրի միջին մասնագիտական կրթական ծրագրի «Կառավարում արտակարգ իրավիճակներում» մասնագիտությամբ Ստեփանավանի 2-րդ կուրսի սովորողները, դասախոս Ա.Ասլանյանի ղեկավարությամբ, կազմակերպել էին սեմինար-քննարկում՝ նվիրված վերականգնվող էներգիայի դերին արտակարգ իրավիճակներում և համայնքների դիմակայունության բարձրացման գործում:

Քննարկման ընթացքում սովորողները ներկայացրել են այլընտրանքային էներգիայի աղբյուրների՝ արևային, հողմային, փոքր հիդրոէներգետիկ և կենսաէներգետիկ համակարգերի հնարավորությունները՝ ընդգծելով, որ դրանք ոչ միայն շրջակա միջավայրի պահպանության և էներգետիկ անկախության ապահովման միջոց են, այլև կարևոր դեր ունեն բնական և տեխնածին աղետների պայմաններում կենսական նշանակության ծառայությունների անխափան գործունեության պահպանման գործում: Անդրադարձ է կատարվել երկրաշարժերի, ջրհեղեղների, սողանքների, խոշոր տեխնածին վթարների և այլ արտակարգ իրավիճակների հետևանքով էներգամատակարարման խափանումների ռիսկերին, ինչպես նաև ապակենտրոնացված էներգետիկ համակարգերի և էներգիայի պահեստավորման լուծումների նշանակությանը: Նշվել է, որ վերականգնվող էներգիայի կիրառումը հնարավորություն է տալիս ապահովել կապի, բժշկական օգնության, ջրամատակարարման և արտակարգ ծառայությունների գործունեության շարունակականությունը՝ նպաստելով համայնքների դիմակայունության և արագ վերականգնման կարողությունների ամրապնդմանը:

Սեմինարի ընթացքում սովորողները քննարկել են նաև Հայաստանի վերականգնվող էներգետիկ ներուժը և այն հնարավորությունները, որոնք կարող են նպաստել անվտանգ, կայուն և արտակարգ իրավիճակներին առավել պատրաստ համայնքների ձևավորմանը: Միջոցառումն անցկացվել է ԵՄ Կայուն էներգիայի շաբաթվա գաղափարախոսության համատեքստում՝ ընդգծելով, որ մաքուր և վերականգնվող էներգիան այսօր ոչ միայն կայուն զարգացման, այլև անվտանգության և համայնքային դիմակայունության կարևոր բաղադրիչն է:

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ CEPOL-Ի TOPCOP II ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆԸ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում հունիսի 25-ին անցկացվել է Եվրոպական միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալության (CEPOL) TOPCOP II ծրագրի շրջանակում կազմակերպված OTNA (Training Needs Assessment)՝ ուսուցման կարիքների ազգային վերլուծությանը նվիրված աշխատաժողովը:

Միջոցառմանը մասնակցել են ՀՀ իրավապահ համակարգի տարբեր մարմինների ներկայացուցիչներ և CEPOL-ի TOPCOP II ծրագրի փորձագետներ:

Աշխատաժողովի բացման և ողջույնի խոսքով հանդես է եկել ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր Մանուկ Մուրադյանը՝ կարևորելով միջազգային համագործակցության, փորձի փոխանակման և մասնագիտական կրթության շարունակական զարգացման դերը կազմակերպված և ծանր հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման գործում:

Ռեկտորն ընդգծել է, որ Հայաստանի իրավապահ համակարգում իրականացվող լայնածավալ բարեփոխումների պայմաններում առանձնահատուկ նշանակություն ունի ժամանակակից մարտահրավերներին համահունչ մասնագիտական կարողությունների զարգացումը և ուսուցման առաջնահերթությունների հստակեցումը: Նա նշել է, որ CEPOL-ի TOPCOP II ծրագրի հետ համագործակցությունը նպաստում է եվրոպական լավագույն փորձի ներդրմանը և կրթական ծրագրերի կատարելագործմանը:

Աշխատաժողովի ընթացքում քննարկվել են կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտում առկա հիմնական մարտահրավերները, այդ թվում՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, կիբեռհանցագործությունները, ֆինանսական հանցագործությունները, մարդկանց թրաֆիքինգը, հիբրիդային սպառնալիքներն ու ապատեղեկատվությունը, ինչպես նաև իրավապահ գործունեության ռազմավարական և մարտավարական վերլուծության զարգացման հարցերը:

Միջոցառման նպատակն էր գնահատել Հայաստանի իրավապահ մարմինների ուսուցման կարիքները և նախանշել այն ուղղությունները, որոնց շրջանակում հետագայում պետք է իրականացվեն թիրախային վերապատրաստման ծրագրեր:

ԵՐԵԽԱՆԵՐԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, ՍԻՐՈ ԵՎ ՀՈՒՅՍԻ ԴԵՍՊԱՆՆԵՐՆ ԵՆ

Հունիսի 1-ը՝ երեխաների պաշտպանության միջազգային օրը, օրացույցի հերթական տոնական ամսաթիվը չէ: Այն հիշեցնում է, որ աշխարհի ամենաթանկ արժեքը՝ երեխան, իր մաքուր ժպիտով, անկեղծ հավատով ու անսահման երազանքներով, աշխարհ է գալիս սիրո, խնամքի և պաշտպանության իրավունքով, իսկ այդ իրավունքների պահպանումը յուրաքանչյուր ընտանիքի, համայնքի և ամբողջ հասարակության պարտքն է: Պաշտպանել երեխային՝ նշանակում է նրան շրջապատել սիրով, ապահովել խաղաղ միջավայր, լսել նրա կարծիքը, գնահատել նրա անհատականությունը և օգնել բացահայտել սեփական կարողությունները:

Այսօր, երբ աշխարհը կանգնած է բազմաթիվ մարտահրավերների առաջ, առավել քան երբևէ անհրաժեշտ է երեխաներին փոխանցել բարության, մարդասիրության և փոխադարձ հարգանքի արժեքները: Նրանք պետք է մեծանան այն համոզմամբ, որ սերն ու բարությունը կարող են փոխել աշխարհը, իսկ կրթությունն ու գիտելիքը՝ բացել նոր հորիզոններ: Յուրաքանչյուր փոքրիկ արժանի է ապրելու այնպիսի հասարակությունում, որտեղ իրեն զգում է կարևոր, պաշտպանված և սիրված, քանի որ նա մեր վաղվա օրվա կերտողն է: Այն երկիրը, որը հոգ է տանում իր երեխաների կրթության, առողջության և անվտանգ մանկության մասին, կառուցում է ամուր ու կայուն ապագա:

Հունիսի 1-ը նաև առիթ է շնորհակալություն հայտնելու բոլոր նրանց, ովքեր իրենց աշխատանքով ու նվիրումով կանգնած են երեխաների կողքին՝ ծնողներ, ուսուցիչներ, բժիշկներ, դաստիարակներ, և յուրաքանչյուր քաղաքացու, ով իր փոքրիկ ներդրումն ունի երջանիկ մանկություն կառուցելու գործում:

Շնորհավո՛ր երեխաների պաշտպանության միջազգային օրը: Թող յուրաքանչյուր երեխայի ծիծաղը լցնի մեր տներն ու փողոցները, իսկ նրանց անհոգ մանկությունը լինի մեր հասարակության ամենամեծ ձեռքբերումը, թող աշխարհի բոլոր մանուկները մեծանան խաղաղ երկնքի տակ, շրջապատված սիրով, ջերմությամբ և լուսավոր ապագայի հավատով:

Ելենա Չերնեցկայա

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ՝ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հունիսի 25-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում Սոցիալական ապահովության ծառայության տարածքային ստորաբաժանումների աշխատակիցների համար անցկացվել է «Խոցելի խմբերի անվտանգության հարցերը» թեմայով վերապատրաստման դասընթաց:

Դասընթացի նպատակն էր զարգացնել մասնակիցների գիտելիքներն ու գործնական հմտությունները՝ արտակարգ իրավիճակներում սոցիալական պաշտպանության կազմակերպման, բնակչությանն անհապաղ աջակցության տրամադրման, ռեսուրսների արդյունավետ կառավարման, ինչպես նաև համայնքային և թիմային արձագանքման ուղղություններով:

Դասընթացը վարել են ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ՓԾ և ՃԿ ուսումնական ստորաբաժանման ԱՌԿ և ՔՊ ամբիոնի պետ Ս. Հովհաննիսյանը և նույն ամբիոնի պրոֆեսոր Գ. Գսպոյանը:

Ուսումնական ծրագրի մշակմանն ու իրականացմանը մասնագիտական աջակցություն են ցուցաբերել ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (UNHCR) գրասենյակը, Եվրոպական քաղաքացիական պաշտպանության և մարդասիրական օգնության գործառույթների գլխավոր վարչությունը (ECHO), ինչպես նաև Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիան:

Նմանատիպ վերապատրաստումները նպաստում են սոցիալական ոլորտի մասնագետների մասնագիտական կարողությունների զարգացմանը և խոցելի խմբերի պաշտպանության արդյունավետության բարձրացմանն արտակարգ իրավիճակներում:

ՀՀ ՆԳՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ CEPOL-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ

Հունիսի 8-12-ը Գերմանիայի Դաշնության Բեռլին քաղաքում անցկացվել է Եվրոպական միության իրավապահ մարմինների վերապատրաստման գործակալության (CEPOL) կողմից կազմակերպված «Սեփականության դեմ ուղղված կազմակերպված հանցագործություններ» (Organised Property Crime – OPC) թեմայով միջազգային վերապատրաստման դասընթացը:

Դասընթացին մասնակցել են ՀՀ ներքին գործերի նախարարության ներկայացուցիչները, ինչպես նաև Հայաստանի պատվիրակության կազմում ընդգրկված ՀՀ գլխավոր դատախազության երկու դատախազ:

Դասընթացի շրջանակում քննարկվել են սեփականության դեմ ուղղված կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի իրավական և ինստիտուցիոնալ հիմքերը, ոլորտում առկա արդի մարտահրավերներն ու հանցավոր խմբավորումների կողմից կիրառվող նոր մեթոդներն ու տեխնոլոգիաները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ավտոմեքենաների հափշտակություններին և ապօրինի շրջանառությանը, բանկոմատների վրա հարձակումներին, գողություններին, մշակութային արժեքների ապօրինի շրջանառությանը և սեփականության դեմ ուղղված կազմակերպված այլ հանցագործություններին:

Անդրադարձ է կատարվել նաև միջազգային համագործակցության մեխանիզմներին և գործիքակազմերին, հետախուզական տվյալների հավաքագրման և վերլուծության մեթոդներին, ֆինանսական հետաքննությունների և ակտիվների վերականգնման հնարավորություններին: Դասընթացի ընթացքում ներկայացվել են Եվրոպական միության անդամ պետությունների և Արևելյան գործընկերության երկրների լավագույն փորձը, ինչպես նաև քննարկվել են սեփականության դեմ ուղղված կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի վերաբերյալ ուսումնական ծրագրի և համապատասխան ձեռնարկի մշակման հարցերը:

Դասընթացի ավարտին մասնակիցներին հանձնվել են մասնակցության վերաբերյալ հավաստագրեր:

ԴԱՍԱԽՈՍԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍՈՍԿ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑԵԼԸ ՉԷ, ԱՅԼ ՈՒՍԱՆՈՂԻ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ, ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԶԳԱՑՈՒՄԻ ԿԵՐՏՈՒՄԸ

Զրույց՝ մանկավարժության մասին



Մանկավարժության էության, մեթոդների և ժամանակակից մարտահրավերների մասին զրուցել ենք ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ՓԾ և ՃԿ ուսումնական ստորաբաժանման ԱՌԿ և ՔՊ ամբիոնի ավագ դասախոս, փրկարար ծառայության պահեստազորի գնդապետ Արայիկ Գասպարյանի հետ: Լինելով Սանկտ-Պետերբուրգի էկոլոգիայի և կենսագործունեության անվտանգության միջազգային գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ՝ Ա. Գասպարյանն իր հարուստ մասնագիտական փորձը ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայությունից փոխանցում է կրթահամալիրի ուսանողներին: Արդեն 13 տարի է՝ նա դասավանդում է «Քաղաքացիական պաշտպանության մարտավարություն», «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» և «Կենսաբանական պաշտպանության հիմունքներ» առարկանները՝ կրթելով փրկարարական և ոստիկանական համակարգի ապագա մասնագետների:

- Բարև Ձեզ, պարո՛ն Գասպարյան, բավական մեծ փորձ ունեք մանկավարժության ասպարեզում, այն, ինչպես և բժշկությունը, բարդ մասնագիտություն է. չափազանց մեծ պատասխանատվությամբ պետք է մոտենալ այդ երկու, կարելի է ասել, անհատի համար ճակատագրական նշանակություն ունեցող մասնագիտություններին. մեկը ֆիզիկական առողջությունն է ապահովում, մյուսը՝ հոգևոր առողջությունը: Երբ ընտրեցիք այս մասնագիտությունը, Դուք գիտակցու՞մ էիք այդ առաքելությունն ստանձնելու բարդությունը:

- Այո՛, լիովին: Երբ փրկարարական ծառայությունից անցում կատարեցի մանկավարժության, ես պարզ գիտակցում էի, որ իմ դերն այլևս ոչ թե անմիջական արձագանքումն է արտակարգ իրավիճակներին, այլ ավելի մեծ՝ «կանխարգելիչ» առաքելությունը: Դասախոսի աշխատանքը սոսկ տեղեկատվություն փոխանցելը չէ, այլ ուսանողի աշխարհայացքի, քննադատական մտածողության և, ամենակարևորը, պատասխանատվության զգացումի կերտումը: Ինչպես բժիշկը բուժում է մարմինը, այնպես էլ մանկավարժն է ձևավորում մասնագետի «մտավոր և բարոյական առողջությունը», որը, ի վերջո, երաշխավորում է մեր հասարակության անվտանգությունը:

- Ընտանիք, աշխատանք և առավել ևս՝ գիտական աշխատանք. ինչպե՞ս եք կարողանում համատեղել:

- Համատեղումը հնարավոր է դառնում խիստ առաջնահերթությունների սահմանման, ժամանակի արդյունավետ կառավարման և բարձր ճկունության շնորհիվ: Սակայն իմ գաղտնիքը հավասարակշռության մեջ է. ընտանիքը ինձ տալիս է հանգստություն և լիցքավորում, աշխատանքը՝ նպատակ, իսկ գիտական աշխատանքը՝ մտավոր թռիչք: Երբ դրանցից յուրաքանչյուրը դիտարկում ես ոչ թե որպես ծանրաբեռնվածություն, այլ որպես կյանքի լրացուցիչ աղբյուր, ամեն ինչ հնարավոր է դառնում համադրել ներդաշնակորեն:

- Ինչպե՞ս եք միաձուլում խստությունն ու կարգապահությունը դասը վարելու ինտերակտիվ մեթոդի հետ:

- Խստությունն ու կարգապահությունն ինտերակտիվ մեթոդների հետ միաձուլելու բանալին «կառուցվածքային ազատությունն» է: Ինտերակտիվ դասը ոչ թե քաոս է, այլ հստակ կանոններով և ժամանակացույցով կառավարվող գործընթաց: Ես ուսանողներին տալիս եմ ստեղծագործելու և քննարկելու ազատություն, սակայն այդ ազատությունը տեղի է ունենում իմ սահմանած «անվտանգության գոտիներում»: Երբ յուրաքանչյուր ուսանող հստակ գիտի իր դերն ու պատասխանատվությունը դասի ընթացքում, կարգապահությունը դադարում է լինել պարտադրանք և դառնում է արդյունավետ աշխատանքի անհրաժեշտ պայման:

- «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկայի ուսումնասիրությունն ինչու՞ է անհրաժեշտ փրկարարների և ոստիկանների գործնական աշխատանքում:

- «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկան փրկարարների և ոստիկանների համար ոչ միայն տեսական գիտելիքների ամբողջություն է, այլ գործնական հմտությունների հիմնաքար, որը թույլ է տալիս արտակարգ իրավիճակներում և պատերազմական դրության ժամանակ գործել համակարգված ու արդյունավետ: Այն ապահովում է անհրաժեշտ ալգորիթմները՝ բնակչության պաշտպանության, տարհանման կազմակերպման և ճգնաժամային իրավիճակներում կառավարման կայունություն պահպանելու համար, ինչը հաճախ դառնում է կյանքեր փրկելու որոշիչ գործոն:

- Ի՞նչ մեթոդներով կարելի է դրդել անգամ ամենածույլ ուսանողին սովորել հետաքրքրությամբ:

- Ամենածույլ ուսանողին ներգրավելու ամենաարդյունավետ ճանապարհն ուսումնական գործընթացը տեսական դասախոսություններից պրակտիկ և խաղային ձևաչափի վերածելն է՝ կիրառելով իրական ճգնաժամային իրավիճակների վերլուծություն, թվային սիմուլյացիաներ և ինտերակտիվ գործիքներ, որոնք գիտելիքը դարձնում են կիրառելի և նշանակալի:

▶ 4

ԴԱՍԱԽՈՍԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍՈՍԿ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑԵԼԸ ՉԷ, ԱՅԼ ՈՒՍԱՆՈՂԻ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ, ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԶԳԱՑՈՒՄԻ ԿԵՐՏՈՒՄԸ

3 ◀ Երբ ուսանողը տեսնում է, որ իր ուսումնասիրած թեման անմիջական կապ ունի կյանքեր փրկելու կամ աղետների ռիսկերը նվազեցնելու հետ, և երբ նրան տրվում է հնարավորություն՝ ընտրելու իրեն հետաքրքրող նախագծերի ուղղությունները, ծուլությունը հաճախ փոխարինվում է մասնագիտական պատասխանատվությամբ և բուն գործընթացի հանդեպ հետաքրքրությամբ:

- Կհիշե՞ք Ձեր առաջին մուտքը լսարան:

- 2013 թվականի դեկտեմբերի 22-ին ՀՀ ԱԻՆ ճԿՊԱ «Կառավարում մասնագիտության» երրորդ կուրսում «Քաղաքացիական պաշտպանության մարտավարություն» առարկայի դասավանդումը:

- Ինչպիսի՞ մարտահրավերների եք հանդիպել դասավանդման ընթացքում:

- Դասավանդման գլխավոր մարտահրավերներն են՝ լսարանի մոտիվացիոն տարբերությունը (որը դժվարացնում է միասնական տեմպի պահպանումը), տեսական նյութի և գործնական իրականության միջև կապի բացակայությունը, ինչպես նաև ժամանակակից թվային գործիքների (GIS, սիմուլյատորներ) արագ յուրացման համար անհրաժեշտ լրացուցիչ ռեսուրսների անհրաժեշտությունը:

- Ինչպե՞ս պետք է լինի ուսանող - դասախոս հարաբերությունը:

- Ուսանող-դասախոս հարաբերությունը պետք է կառուցվի հարգանքի, մասնագիտական համագործակցության և ուղղորդող առաջնորդության հենքի վրա: Դասախոսը պետք է հանդես գա ոչ թե որպես վերահսկող, այլ որպես փորձառու գործընկեր, ով ստեղծում է անվտանգ միջավայր՝ քննադատական մտածողության, հարցեր տալու և նախաձեռնողականություն ցուցաբերելու համար: Արդյունավետ հարաբերությունը ենթադրում է հստակ սահմանված պահանջներ, արդար գնահատում և պատրաստակամություն՝ աջակցելու ուսանողի մասնագիտական աճին՝ միաժամանակ պահպանելով ակադեմիական էթիկան:

- Լսարան պահելը շատ դժվար է. լավ մասնագետ լինելը դեռ բավարար չէ դասը լսելի դարձնելու և առարկայի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու համար: Կասե՞ք՝ ո՞րն է Ձեր գաղտնիքը և ինչպե՞ս եք մոտիվացնում ուսանողներին:

- Լսարան պահելու իմ գաղտնիքը գիտելիքի չոր փոխանցումից դեպի ակտիվ ներգրավվածության անցումն է: Ես ուսանողներին չեմ «սովորեցնում», ես նրանց հետ միասին «լուծում եմ»: Մոտիվացիայի բանալին պարզ է՝ դասը պետք է դուրս գա դասագրքերի շրջանակից և դառնա իրական կյանքի անվտանգության մոդել: Երբ ուսանողը տեսնում է, որ իր ձեռք բերած հմտությունը կարող է վաղը փրկել կյանքեր, հետաքրքրությունը դառնում է բնական և անկեղծ: Ինտերակտիվ մեթոդներով, գործնական խաղերով և ուսանողին սեփական մտքերն առաջ քաշելու հնարավորություն տալով՝ ես նրանց պասիվ լսողից վերածում եմ իրական գործընկերոջ:

- Որո՞նք են Ձեր հիմնական արժեքները՝ որպես մասնագետ և որպես մարդ:

-Իմ հիմնական արժեքները նվիրումն ու պատասխանատվությունն են: Որպես մասնագետ՝ ձգտում եմ տրամադրել ճշգրիտ և հասանելի գիտելիք, իսկ որպես մարդ՝ աջակցել յուրաքանչյուրին իր մասնագիտական աճի ուղու վրա՝ առաջնորդվելով բարեխղճությամբ և հասարակական օգուտ ստեղծելու գաղափարով:

- Պատմե՛ք Ձեր կյանքի գլխավոր ձեռքբերման մասին:

Իմ գլխավոր ձեռքբերումը ոչ թե նյութական հաջողություն կամ կոչում է, այլ մարդկանց աջակցելու և գիտելիք փոխանցելու կարողությունը: Ես հպարտանում եմ ոչ թե միայն իմ գործունեությամբ, այլ այն վստահությամբ, որը ձևավորվել է իմ և ուսանողների միջև՝ բարդ խնդիրներ լուծելու և նրանց մասնագիտական աճին նպաստելու ճանապարհին: Սա է իմ ամենամեծ արժեքը՝ աշխատանքի մեջ կառուցած մարդկային կապը:

- Ի՞նչը կփոխեիք կրթական համակարգում:

-Կրթական համակարգի բարելավումը պահանջում է հիմնարար անցում անգիր անելուց դեպի գործնական հմտությունների զարգացում, որտեղ ուսումնական ծրագրերը կկառուցվեն ոչ թե տեսական վերացական գիտելիքների, այլ իրական կյանքում և մասնագիտական դաշտում կիրառելի լուծումների վրա՝ ուսանողին վերածելով պասիվ սպառողից ակտիվ հետազոտողի ու խնդիր լուծողի:

- Ինչպե՞ս կգնահատեք այսօրվա սերնդին: Ձեր մանկավարժական երկար տարիների փորձից ի՞նչ կցանկանաք փոխանցել ուսանողներին:

- Այսօրվա սերունդն առանձնանում է իր տեխնոլոգիական հմտությամբ և գլոբալ աշխարհայացքով, որը նոր հնարավորություններ է բացում, բայց նաև թելադրում է նոր մարտահրավերներ: Որպես մանկավարժ՝ նրանց փոխանցում եմ հիմնական դասը. տեխնոլոգիաները գործիք են, բայց մարդկային արժեքները, քննադատական մտածողությունն ու անընդհատ սովորելու ձգտումը՝ հիմքը: Ես նրանց սովորեցնում եմ չվախենալ սխալներից՝ հիշեցնելով, որ յուրաքանչյուր ձախողում ընդամենը հերթական դասն է, իսկ հաջողության բանալին՝ հարմարվողականության և խոր մարդկայնության համադրությունը:

- Ի՞նչ եք կարծում, մանկավարժին ստաժն է մանկավարժ դարձնու՞մ, թե՞ մանկավարժ ծնվում են:

- Մանկավարժ լինելը բարդ համադրություն է. իհարկե, գոյություն ունի մի տեսակ «մանկավարժական շնորհ» հաղորդակցվելու, մարդկանց ոգեշնչելու և նրանց ներուժը բացահայտելու բնածին կարողություն, սակայն առանց տարիների փորձի, մշտական ինքնակատարելագործման և մասնագիտական հասունացման, այդ շնորհը կարող է չիրացվել: Ստաժը պարզապես օրացուցային ժամանակ չէ, այլ այն ճանապարհն է, որի ընթացքում դասախոսը սովորում է լսել, հասկանալ և ճկուն լինել՝ վերածելով իր բնածին տաղանդը կայուն մասնագիտական վարպետության: Այսպիսով՝ մանկավարժը ծնվում է որպես պոտենցիալ, բայց դառնում է մասնագետ՝ ստաժի և անխոնջ աշխատանքի շնորհիվ:

- Ձեր կարծիքով՝ կա՞ն վատ գրքեր: Ձեր ընթերցած գրքերից ո՞րն է ամենատպավորիչը, և դրանցից ո՞ր գիրքը կրկին կընթերցեիք:

- Ինչպես նշել է Օսկար Ուայլդը, աշխարհում չկան վատ գրքեր, կան միայն լավ կամ վատ գրվածներ: Անձամբ ինձ վրա ամենատպավորիչը Ագաթա Քրիստիի «Անվերջանալի գիշեր»-ն է՝ իր բարդ հոգեբանական կառուցվածքով: Իսկ Անտուան դը Սենտ-Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը» այն գիրքն է, որին վերադառնում եմ պարբերաբար: Այն իմաստային այնպիսի շերտեր ունի, որոնք նորովի են բացահայտվում կյանքի յուրաքանչյուր փուլում՝ ամեն անգամ սովորեցնելով պարզություն, սեր և պատասխանատվություն. հատկություններ, որոնք անհրաժեշտ են ոչ միայն ընթերցողին, այլև ցանկացած մանկավարժի:

- Խոսենք նախասիրություններից. ի՞նչն է, որ մի քանի ժամով Ձեզ կտրում է իրական կյանքից:

- Ինձ իրական կյանքից ամբողջությամբ կտրում են բարդ տրամաբանական խնդիրներն ու ալգորիթմական մարտահրավերները: Այն պահը, երբ բախվում եմ ոչ ստանդարտ իրավիճակի, և պետք է գտնել անհնար թվացող լուծում, ինձ համար յուրօրինակ «մտավոր արկածախնդրություն» է: Այդ գործընթացում ժամանակը կանգ է առնում, և ամբողջ ուշադրությունս կենտրոնանում է համակարգային լուծումներ մշակելու վրա, ինչը նաև հիանալի մարզանք է իմ մասնագիտական գործունեության համար:

- Թեմա, որի շուրջ անդադար կխոսեք:

- Այն թեման, որի շուրջ կարող եմ անվերջ խոսել, տիեզերքի անսահմանությունն ու մարդու և շրջապատող աշխարհի փոխկապակցվածությունն է: Ինձ միշտ հիացրել է այն գաղափարը, թե ինչպես է ամեն ինչ փոխկապակցված՝ մեծից մինչև փոքր, և ինչպես է մարդու կատարած յուրաքանչյուր փոքր գործողություն արձագանք գտնում համակարգի մեջ: Սա ոչ միայն փիլիսոփայություն է, այլև իմ մասնագիտական մոտեցման հիմքը, որովհետև աղետների կառավարման մեջ հենց այդ «փոխկապակցվածության» գիտակցումն է օգնում կանխատեսել և կանխարգելել ռիսկերը:

- Ո՞րն է կյանքի շարժիչ ուժը Ձեզ համար:

-Իմ կյանքի շարժիչ ուժը 3 տարեկան թոռնուհիս է: Նա է ինձ հիշեցնում, որ իմ ամենօրյա աշխատանքը՝ կրթելը, աղետների ռիսկերը կառավարելը և ավելի անվտանգ միջավայր ստեղծելը, ունի մեկ գլխավոր նպատակ՝ ապահովել մի աշխարհ, որտեղ նա և նրա սերունդը կմեծանան առանց վտանգների՝ բացահայտելով տիեզերքի անսահմանությունը:

Բլից հարցեր
Պատասխանում եք կարճ և արագ

- Երեք բառ, որով կբնորոշեք Ձեզ:

- Բարի, օգտակար, արագաշարժ:

- Միտք, որն առաջինը ծագում է արթնանալիս:

- Ինչպե՞ս արդյունավետ դարձնել օրս:

- Օրն սկսում եք...

- ժամը 6.00-ից:

- Սիրած աֆորիզմը:

- Ամենասիրելի աֆորիզմներից մեկը պատկանում է Մարկ Տվենին.

«Աշխատանքը գնահատվում է որպես անհրաժեշտություն՝ թե՛ հոգու, թե՛ մարմնի համար, սակայն ծուլությունը մնում է որպես ամենահաճելի զգացողություն»:

- Սիրելի զբաղմունքը:

- Քայլելը:

- Խորհուրդ, որը կտայիք:

- Գնահատե՛ք ինքներդ ձեզ:

- Իսկ վերջում... (ավելացրե՛ք այն, ինչ Ձեր մտքով անցնում է այս պահին):

Կյանքն իսկապես հիանալի է, և դրա ամեն մի վայրկյանն արժե վայելել՝ ուշադրություն դարձնելով անգամ ամենափոքր գեղեցկություններին:

Հարցազրույցը վարեց
Ելենա Չերնեցկայան

ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

ԵՍ ԱՅՍ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ԱՐԺԱՆԻ ԿՐՈՂՆ ԵՄ

Մարդկանց հետ հաղորդակցությունը, շփումները տարբեր բնագավառներում կարևոր դեր ունեն մեր կյանքում դրանք օգնում են հասկանալ միմյանց, կառուցել առողջ հարաբերություններ և լուծել առաջացած խնդիրները, որոնք կարող են լինել տարբեր իրավիճակներում՝ ընտանիքում, ընկերական շրջապատում կամ աշխատանքում: Ինքս իմ մեջ նկատած շատ հատկանիշներից, որոնցից է մարդկանց հետ շփման զանազան ուղիներ գտնելը, հավատարմությունը, նվիրվածությունը, լսելու ունակությունը և կամքի դրսևորման այլ հատկանիշներ, որոշեցի, որ իմ որակները համապատասխանում են այսօրվա ընտրածս մասնագիտությանը: Որոշմանս վրա ազդեցություն չեն ունեցել ոչ՝ ծնողներս, ո՛չ էլ շրջապատս: Բազում խորհուրդներ, կարծիքներ, տարբեր տեսագետներ հնչեցին թե՛ ծնողներիս, թե՛ շրջապատիս կողմից: Եվ ահա արդյունքում՝ ինձ գտա այս համազգեստի և այս ուսադիրների մեջ, որի համար հպարտ եմ: Այս մասնագիտությունն իր ամբողջ խորությամբ ու հետաքրքրությամբ ինձ տարավ դեպի իրեն՝ անկախ այն ամենից, որ ունեի էլի նախընտրելի մասնագիտություններ: Այս ասպարեզում հաջողելու համար խիստ կարևոր է պատասխանատվության բարձր զգացումը, որն ամեն անգամ ստիպում է ավելի խոր մտածել ու ըմբռնել իրավիճակը: Ապագայի վերաբերյալ ես ունեմ հստակ ակնկալիքներ: Ցանկանում եմ ունենալ կայուն, գնահատված աշխատանք և գիտակցում եմ, որ զարգանալու և մասնագիտական հաջողությունների հասնելու համար շատ բան ինձնից է կախված: Հինգից տասը տարի հետո ինձ պատկերացնում եմ որպես վստահելի և փորձառու մասնագետ, ով գիտի իր գործը և կարողանում է արդյունավետ շփվել մարդկանց հետ: Կարծում եմ՝ այս հմտությունները միշտ պահանջված են լինելու, քանի որ մարդիկ միշտ ունեն փոխադարձ հասկացվածության և հաղորդակցության կարիք: Եզրափակելով՝ կարող եմ ասել, որ եթե նույնիսկ հնարավորություն լիներ վերանայել իմ ընտրությունը, ես այն չէի փոխի, քանի որ այն համապատասխանում է իմ հետաքրքրություններին և արժեքներին: Թեև մարդկանց հասկանալը և ճիշտ մոտեցում ցուցաբերելը երբեմն դժվար է, այնուամենայնիվ, դա ամենահաճելի զգացումն է: Մասնագիտության մեջ նշեմ մի կարևոր բան ևս, այն ոգևորել է ինձ անգամ այն պահերին, երբ կարծես հակառակը պետք է լիներ: Սիրում եմ մասնագիտությունս, հպարտ եմ ու երջանիկ, որ հենց այս համազգեստի արժանի կրողն եմ:

Գրիգոր Գենջոյան
2-րդ կուրս, ոստիկանության սերժանտ

ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ՊԱՏՈՒՀԱՆ

1. Ինչո՞վ է աստղը տարբերվում մոլորակից:
2. Շաբաթվա ո՞ր օրվա անունն է գալիս եբրայերենից և թարգմանված նշանակում է «ձեռնպահ մնալ»:
3. Լռությունը համաձայնությա՞ն նշան է:

Նախորդ համարի պատասխանը՝

Հետաքրքիր փաստ. Լեոնարդոն միաժամանակ նկարում էր մի ձեռքով ու գրում՝ մյուսով:

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ՆԳՆ կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:

Տպագրվել է «Աստղիկ Գրատուն» հրատարակչությունում:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 100 օրինակ:
Ստորագրված է տպագրության 29.06. 2026թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Արուսյակ Քոչարյան